ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2024թ. № 917

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 1266 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2089658 վկայականը և «Օլյա Տրանդաֆիլովա» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Հրաչյա Ազգերտի Շահմուրադյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի «Հրաչյա Ազգերտի Շահմուրադյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու և հողամասի ճշգրտված հատակագիծը հաստատելու մասին» թիվ 1266 որոշումը լրացնել 1.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հրաչյա Ազգերտի Շահմուրադյանին սեփականության իրավունքով պատկանող 30 քառակուսի մետր մակերեսով լոգարանի գործառնական նշանակությունը փոփոխել ավտոտնակ օգտագործելու համար»:

2. Սույն որոշմամբ կատարված լրացումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 18
ք. Սպիտակ